

ցին նոյնպէս կը պարսաւէր այդ նիւթոց տոհմային խտրութիւնը, եւ կ'ըսէր թէ « ոչ պղծ է զնա (մարդը) ծովային զեռունքն » (Ատեն. 201): Աւելի վերջն ալ Ապարանեցին ղեռ կը տեսնէր մեծ Հայոց ծովափանց վրայ ազգային վաճառականներ, որոնք « ժողովէին՝ կ'ըսէ՝ զեռունս եւ ուտէին » հում կամ եփած (ԾԵ, Է): Կը տեսնէր նաեւ զազանաբեկն ուտողներ (ԾԵ, Թ): Նմանապէս կ'աւանդէ՝ թէ կաֆայի հայ հաւորաներն իրենց բռնած թրուչուններն « ոչ զենուին սրով, այլ աստուածամորթ արարեալ ուտէին » (ԾԵ, Է): Ինքն իսկ տեղեկատուս հակառակ էր մեր ընդհանուր խտրութեանց, որոց ղէմ ուղղած է ճարտարաբար իւր աշխատութեան ամբողջ ԾԵ գլուխը:

Կիլիկեցի հայութիւնն իւր հիւսիսային եղբայրներէն շատ լայնախոհ էր այս մասին: Եւ իւր ամենէն զարգացեալ մտքերէն մին՝ Լամբրոնացին՝ կը տրտնջէր, որ « աշխարհականք ուսան ի նոցանէ (յարեւմտեայց) զանխտրոշրիւն կերակրոց », բայց ոչ անոնց լաւութիւնքը (Պտր. 323): Ասով կը բամբասէ ոչ առաջին մասն՝ այլ երկրորդը. զի ինքն իսկ արհամարհող մ'էր խտրութեանց առ հասարակ. եւ ուրիշ տեղ մը կ'ըսէ ի նպաստ Փրանկաց՝